

Հողվածների ամփոփագրեր

Հայկական դրամի արժևորման ազդեցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության և սննդամթերքի վերամշակման ձեռնարկությունների մրցունակության վրա

*Մհեր Բադրամյան, Հայկական միջազգային տնտեսական հեղափոխությունների խումբ
Վահրամ Ղուշջյան, Հայկական միջազգային տնտեսական հեղափոխությունների խումբ*

Հայկական դրամը 2003-2006թթ. արժևորվել է ավելի քան 40 տոկոսով: Լայնորեն փարածված տնտեսակերի համաձայն՝ անվանական փոխարժեքի այս կարուկ փոփոխությունը բացասական ազդեցություն է ունեցել տեղական արտադրողների, և հատկապես արտահանողների վրա: Հեղափոխությունում օգտագործվել են 58 հայկական ընկերությունների ընտրանքային հեղափոխության արդյունքները՝ պարզելու, թե արժևորումը ինչ ազդեցություն է ունեցել Հայաստանում զբոսաշրջության, տեղեկատվական տեխնոլոգիաների և սննդամթերքի վերամշակման ձեռնարկությունների մրցունակության վրա: 2003-2006թթ-ին ընկերությունների տեխնիկական արդյունավետության գործակիցները և դրանց փոփոխությունը գնահատելու համար օգտագործվել է ստոխաստիկ սահմանային մոդելավորման մեթոդը: Արժույթի արժևորման հնարավոր ազդեցությունը ընկերությունների եկամուտների և արտահանման ծավալների վրա պարզելու նպատակով տեխնիկական արդյունավետության գործակիցները օգտագործվել են ռեգրեսիայի հավասարումը գնահատելու համար:

Հեղափոխությամբ պարզվել է, որ փոխարժեքի փոփոխությունը հետևողական և վիճակագրորեն նշանակալի ազդեցություն է ունեցել ընկերությունների տեխնիկական արդյունավետության վրա: Պարզվել է նաև, որ փորձի կուրակումը տեխնիկական արդյունավետությունը պայմանավորող էական գործոն է հանդիսացել:

Հեղափոխությունում ուսումնասիրվել են փոխարժեքի և ընկերությունների տեխնիկական արդյունավետության, արտահանման ու եկամտաբերության միջև փոխկապակցությունները:

Փոխարժեքի դինամիկան Հայաստանում

*Վահե Հեբոյան, Զորջիայի Համալսարան
Լևվել Գանթեր, Զորջիայի Համալսարան*

Տպավորիչ տնտեսական աճին զուգընթաց՝ հայկական դրամի փոխարժեքը և՛ անվանական, և՛ իրական արտահայտությամբ զգալիորեն արժևորվել է, ինչը հասարակության փարբեր հատվածների մոտ անհանգստությունների տեղիք է տվել: Հայաստանի կենտրոնական բանկը և կառավարությունը մի կողմից, տնտեսագետները, գործարարները ու քաղաքական գործիչները

ըը՝ մյուս կողմից փարբեր, գերազանցաբար հակադիր մեկնաբանություններ են փայլիս արժևորման պատճառների վերաբերյալ: Սույն հետազոտության նպատակն է պարզել Հայաստանում փոխարժեքի դինամիկան պայմանավորող փոփոխական գործոնները: Փոխարժեքի երկարաժամկետ դինամիկան մոդելավորելու համար կիրառվել է վարքագծային հավասարակշիռ փոխարժեքի մոդելը: Հետազոտության արդյունքները ցույց են փայլիս, որ հայկական արժույթը շեղվել է իր երկարաժամկետ հավասարակշիռ ուղուց: Շեղման չափի գնահատականը զգայուն է դիֆարկվող փոփոխականների համախմբի նկատմամբ: Թեպետ գնահատված մոդելներում փոփոխականները վիճակագրորեն նշանակալի են, իսկ շեղման ուղղությունը միանման է, սակայն շեղման մեծության գնահատականները փարբեր են: Լրացուցիչ վերլուծություն է անհրաժեշտ արդյունքների զգայունությունը փոփոխականների ընտրությունից պարզելու, ինչպես նաև, հաշվի առնելով փոփոխականների մեծամասնության նշանների փոփոխական ոչ միարժեքությունը, ստացված արդյունքներից ճշգրիտ եզրահանգումներ կադարելու համար:

Բանկային համակարգի արդյունավետությունը, շուկայի կառուցվածքը և օտարերկրյա սեփականությունը. ինչո՞ւ է պայմանավորված ավանդների ներգրավման և վարկերի տրամադրման փոփոխությունը Հայաստանում

Էռա Դարլա-Նորրիս, Արժույթի միջազգային հիմնադրամ
Հուլիան Ֆլորկենմայեր, Արժույթի միջազգային հիմնադրամ

Չնայած բանկային համակարգի լայնածավալ բարեփոխումներին, մակրոփոփոխական երկարաժամկետ կայունությանը և փոփոխական աճի բարձր տեմպին՝ ֆինանսական միջնորդության մակարդակով Հայաստանը դեռևս երբեք է մնում այլ անցումային փոփոխությամբ երկրներից, իսկ ավանդային և վարկային փոփոխությունների փարբերությունը ավելի մեծ է, քան՝ Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի անցումային փոփոխությամբ երկրների մեծ մասում: Սույն աշխատությունը ուսումնասիրում է բանկերի բնութագրիչների, շուկայի կառուցվածքի, օտարերկրյա սեփականության և մակրոփոփոխական գործոնների դերը Հայաստանում ավանդային և վարկային փոփոխությունների փարբերության, ինչպես նաև զուտ փոփոխային եկամտի որոշման գործում: Հետազոտությամբ պարզվել է, որ բանկային բնութագրիչները, մասնավորապես՝ բանկի չափը, իրացվելիությունը, դիրքը շուկայում, ինչպես նաև շուկայի կառուցվածքը բացառում են ավանդային և վարկային փոփոխությունների փարբերության և զուտ փոփոխային եկամտի միջբանկային և միջամանակային փոփոխումների մեծ մասը: Ի փարբերություն այլ անցումային փոփոխությամբ երկրների՝ ուղղակի կապ գոյություն չունի օտարերկրյա սեփականության ու ավանդային և վարկային փոփոխությունների փարբերության, ինչպես նաև զուտ փոփոխային եկամտի միջև: Սակայն, բանկերի արդյունավետության փոփոխությունից, նշանակություն ունի՝ արդյոք բանկը օտարերկրյա սեփականություն է, թե՛ ոչ:

Արտադրողականությունը և ձեռնարկությունների արդյունավետության գործոնները Հայաստանում

Կարեն Գրիգորյան, Համաշխարհային բանկ
Վահրամ Մրեփանյան, Համաշխարհային բանկ

Հողվածում վերլուծվում են արտադրողականության աճի գործոնները Հայաստանում և առաջարկվում են ապագա կայուն աճի խրախուսմանը միտված միջոցառումներ: Ամփոփված են զարգացած և անցումային երկրներում ձեռնարկությունների արտադրողականության փեսական գործոնները և փաստական արդյունքները, առանձնակի ուշադրություն է դարձված այնպիսի առանցքային գործոնների, ինչպիսիք են մրցակցությունը, օտարերկրյա ուղղակի ներդրումները և ինստիտուցիոնալ միջավայրը: Հեփազոտության առանցքը 2003-2005թթ. արդյունաբերության և ծառայության ոլորտների 300 հայկական ձեռնարկությունների ընտրանքային հեփազոտության արդյունքների վերլուծությունն է՝ ընդհանուր գործոնային արտադրողականությունը գնահատելու նպատակով:

Հեփազոտությամբ պարզվել է, որ Հայաստանում փեխնիկական արդյունավետության և նաև ընդհանուր գործոնային արտադրողականության նշանակալի աճ փեղի չի ունենում՝ ի հակադրություն որոշ հեփազոտությունների արդյունքների: Ձեռնարկություններում փեխնիկական առաջընթացը, ըստ երևույթին, Հայաստանի փնփեսական աճի էական գործոն չի հանդիսացել: Հեփազոտության արդյունքները վկայում են, որ ընդհանուր գործոնային արտադրողականությունը արդյունաբերության և ծառայության ոլորտների ճյուղերում էապես չի փարբերվում: Գրեթե որևէ փարբերություն չի բացահայտվել նաև արտահանող և արտահանում չիրականացնող ձեռնարկությունների ընդհանուր գործոնային արտադրողականությունում, ինչը վկայում է, որ արտահանման շուկաներում մրցակցային ճնշումը չի նպաստել հայկական ձեռնարկությունների արտադրողականության աճին: Սա ցույց է փայխ, որ նոր փեխնոլոգիաների և գիփելիքի փարածմանը ու աշխատուժի հմտությունների բարելավմանը միտված քաղաքականության հրափապ անհրաժեշտություն կա: Ընդհանուր գործոնային արտադրողականության միջին գնահատված արժեքները գործնականում նույնն են նաև փեղական և օտարերկրյա սեփականությամբ ընկերություններում, ինչը ցույց է փայխ, որ ինստիտուցիոնալ միջավայրում առկա են լուրջ թերություններ, որոնք արգելակում են օտարերկրյա սեփականությամբ ձեռնարկություններից փեխնոլոգիաների և գիփելիքի փոխանցումը փեղական ձեռնարկություններին: Անորոշ է նաև մրցակցության դրական ազդեցությունը ընդհանուր գործոնային արտադրողականության վրա, քանի որ Հայաստանում մրցակցային ճնշումները դեռևս բավականաչափ ուժեղ չեն՝ կառավարչական որոշումների վրա ազդելու համար:

Հայաստանում մակրոփնփեսական նշանակալի առաջընթացը թերևս պայմանավորված է անցման սկզբնական փուլում իրականացված հաջող փարբեփոխումներով, հափկապես՝ գների և արտաքին առևտրի ազափականացմամբ և մասնավորեցմամբ: Սակայն, եկել է երկրորդ սերնդի փարե-

փոխումների ժամանակը՝ ինստիտուցիոնալ և մրցակցային միջավայրը բարելավելու և օտարերկրյա ուղղակի ներդրումները խթանելու համար:

Հայաստանի մասնավոր հատվածի մրցունակությունը. անցում հաջորդ փուլ

Մանուկ Հերզնյան, «Տնտեսություն և արժեքներ» հեղափոխական կենտրոն
Գագիկ Գաբրիելյան, «Տնտեսություն և արժեքներ» հեղափոխական կենտրոն
Աննա Մակարյան, «Տնտեսություն և արժեքներ» հեղափոխական կենտրոն

Հոդվածում ուսումնասիրվում են Հայաստանի փոփոխական ձեռքբերումները և վերլուծվում է Հայաստանի մրցունակությունը՝ այն պայմանավորող գործոնների ու պարզառահեղանքային կապերի հեղափոխության միջոցով: Հայաստանի փոփոխական նկարագիրը և մրցունակության միկրոփոփոխական հիմքերը համադրվում են նման կամ մրցակից երկրների հետ: Հոդվածում ներկայացված են առաջարկություններ՝ Հայաստանի հեղափոխական և ազգային մրցունակության բարելավման վերաբերյալ: Առաջարկություններն առնչվում են ապագա քաղաքականությունների համարեքստիվ, նախապատվությունների սահմանման ու կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացման ռազմավարությունների մշակման մեխանիզմներին, փարաձառյալում և գլոբալ փոփոխությունում Հայաստանի դիրքավորման մոտեցումներին:

Հայաստանի Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ. գյուղական բնակավայրերում փոփոխական աճի և աղքատության կրճատման ազդեցության գնահատում

Կեննեթ Ֆորստոն, «Մաթեմատիկա – քաղաքականության
հեղափոխում» ընկերություն

Էսթեր Հակոբյան, Հազարամյակի մարտահրավեր
հիմնադրամ – Հայաստան

Անահիտ Պետրոսյան, Հազարամյակի մարտահրավեր
հիմնադրամ – Հայաստան

Անու Ռանգարաջան, «Մաթեմատիկա – քաղաքականության
հեղափոխում» ընկերություն

Ռեբեկա Թանսթալլ, Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիա

Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի 236 մլն. ԱՄՆ դուրս արժողությամբ ծրագիրը Հայաստանում նպատակ ունի կրճատել աղքատությունը գյուղական բնակավայրերում՝ ոռոգման ենթակառուցվածքում ներդրումների, գյուղական ճանապարհների վերանորոգման և ֆերմերների վերապատրաստման միջոցով: Հոդվածում քննարկվում է ֆերմերների վերապատրաստման ծրագրի ազդեցության գնահատումը՝ ջրի կառավարման և բարձրարժեք մշակաբույսերի մշակման բնագավառում: Գնահատման համար կիրառվում է պատահական ընտրության սկզբունքը, որի համաձայն գյուղական համայնքները պատահականորեն ընտրվում

են որպես ազդեցության խումբ, որոնց առաջարկվում է համապատասխան վերապատրաստում, կամ որպես սպուզիչ խումբ, որոնց նման վերապատրաստում չի առաջարկվում: Այնուհետև համեմատվում են ազդեցության և սպուզիչ խմբերում ֆերմերների ցուցաբերած արդյունքները: Գնահատման արդյունքները կօգտագործվեն վերապատրաստման ծրագրի արդյունավետությունը, իր հիմնական նպատակների փաստակցունից, գնահատելու համար: Այդ նպատակներից են արդյունավետ գյուղատնտեսական արտադրության ներդրումը, բարձրարժեք մշակաբույսերի ցանքատարածությունների ընդլայնումը, ֆերմերային փոփոխությունների արտադրողականության և եկամուտների բարձրացումը, աղքատության կրճատումը: Մտացված արդյունքները կարող են օգտագործվել նաև նման փոփոխական միջավայր ունեցող այլ երկրներում, այնպես, որ ներդրումները արդյունավետորեն փեղաբաշխվեն այն ոլորտներում, որոնց փոփոխական ազդեցությունը հայտնի է: